# Կանաչ տերևով ծառը ծածկվեց...



**Exported from Wikisource the 12/11/15**

*Թարգմանություն՝ Հակոբ Հակոբյանի*

* * *

I

Կանաչ տերևով ծառը ծածկվեց
Եվ կոկոններով քնքույշ հագնվեց .
Կենսատու ցողով մարգարտանման
Ուռճանում էր նա շնչովը գարնան:
Բայց նորա դալար շյուղերին մոտիկ
Թաքնվեց դաժան ծեր— սառնամանիք:
— Է՛յ, տուր ինձ, ասաց, մանուկ կոկոններ,
Չե՛ս տալ, տե՛ս, զոռով ինքս կըխլեմ . . .
— Ա՛խ, թողի՛ր հանգիստ իմ բողբոջներին
Նորա ծաղիկներ գոնե բացվեին . . .
Սառնամանիքին ծառը շշնջաց
Եվ ողջ էությամբ արմատից դողաց:

II

Եվ ահա կամաց-կամաց բացվեցան
Անուշ բուրմունքով դումաշ կոկոններ
Եվ արեգակից ջերմ փայփայվեցան,
Իսկ թռչունների անհոգ երամներ
Հնչեցին ուրախ, սիրահար երգեր:

Հանկարծ ծառի մոտ թռավ չար քամին․
— Է՛յ, տուր ինձ, ասաց, սիրուն ծաղիկներ,
Կը հափշտակեմ թե չէ այս ժամին․ ․ ․
— Ա՜խ, խնայիր ինձ և մի՛ արգելիր
Իմ ծաղիկներին պտղատու լինել․ ․ ․
Կատաղի քամուն ծառը շշնջաց
Եվ սարսափելով վախից դողդողաց։

III

Բայց ահա մատաղ պտուղներին խակ
Ջերմացրեց սիրով ամռան արեգակ,
Եվ ծառը զուգվեց հասուն մրգերով։
Մոտեցավ նորան հուշիկ քայլերով
Հրաշալի կույսը տապիցը նեղված․
— Ա՜խ, տո՛ւր ինձ, ասաց, անուշիկ մրգեր,
Զոռով չեմ խլիլ երեխայրիքներ․ ․ ․
— Ա՛ռ քեզ, նազելի, ահա իմ ճղներ
Քեզ են սպասում վաղուց անհամբեր,
Որ գաս հեշտացնես նորանց ծանր բեռ․ ․ ․
Եվ ծառը սիրով նորան ողջունեց
Ու խոնարհվելով ճղները կախեց․ ․ ․

# About this digital edition

This e-book comes from the online library Wikisource[1]. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters…

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported[2] license or, at your choice, those of the GNU FDL[3].

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at this page[4].

The following users contributed to this book:

- Վազգեն

---

1. ↑ http://wikisource.org
2. ↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0
3. ↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html
4. ↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium